ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2017թ. N------Ա

ՈՐՈՇՈՒՄ

ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 71-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 32–րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Համաձայնություն տալ՝ Արման Ավետյանին սեփականության իրավունքով պատկանող Երևան, Ավան, Նարեկացի թաղամասի հ.54/5 հասցեում, տարածագնահատման 7-րդ գոտում գտնվող 60.45 քմ մակերեսով հողամասը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.18012016-01-0038 վկայական) և Ալեքսանդր Ավետյանին սեփականության իրավունքով պատկանող Երևան, Ավան, Նարեկացի թաղամասի հ.54 շենքի հ.35 հասցեում, տարածագնահատման 7-րդ գոտում գտնվող 51.18 քմ մակերեսով հողամասը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.05022013-01-1639 վկայական) /ընդհանուր՝ 111.63 քմ/ Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող Երևան, Բակունցի փողոցին հարող տարածքում և տարածագնահատման 7-րդ գոտում գտնվող 150.0 քմ մակերեսով հողամասի հետ փոխանակելուն:

2. Ընդունել ի գիտություն, որ

1) հողամասերի փոխանակման պայմանագրերը ենթակա են կնքման՝ սահմանված կարգով դրանց վրա առկա շինությունները սեփականատերերի միջոցների հաշվին քանդելուց հետո,

2) հողամասերի շուկայական արժեքների տարբերությունը ենթակա է վճարման Երևան համայնքի բյուջե, որը կազմում է 255.000 (երկու հարյուր հիսունհինգ հազար) ՀՀ դրամ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք-Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

«ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ավագանու սույն որոշման նախագծով նախատեսվում է Ալեքսանդր և Արմեն Ավետյաններին սեփականության իրավունքով պատկանող Նարեկացի թաղամասի հ.54 շենքի հ.35 և Նարեկացի թաղամասի հ.54/5 հասցեներում գտնվող համապատասխանաբար 51.18 քմ և 60.45 քմ մակերեսներով հողամասերը փոխանակել Երևան համայնքի սեփականություն հանդիսացող Բակունցի փողոցին հարող տարածքում գտնվող 150.0 քմ մակերեսով հողամասի հետ:

Հարկ է նշել, որ քաղաքացիներին սեփականության իրավունքով պատկանող հողամասերի վրա առկա են 47.24 քմ և 49.7 քմ մակերեսներով շինություններ, որոնք փոխանակման պայմանագիր կնքելուց առաջ սահմանված կարգով ենթակա են քանդման՝ նախապես Երևանի քաղաքապետարանից քանդման թույլտվություն ստանալուց հետո:

Երևանի քաղաքապետարանի նախաձեռնությամբ, համապատասխան որակավորում ունեցող մասնագետների միջոցով, իրականացվել է քննարկվող գույքի շուկայական արժեքի գնահատման աշխատանքներ, որից հետևում է, որ Ալեքսանդր և Արմեն Ավետյաններին սեփականության իրավունքով պատկանող հողամասերի շուկայական արժեքը կազմում է համապատասխանաբար 1.490.000 ՀՀ դրամ և 1.755.000 ՀՀ դրամ, իսկ Երևան համայնքի սեփականություն հանդիսացող հողամասի շուկայական արժեքը կազմում է 3.500.000 ՀՀ դրամ: Երևան համայնքի սեփականություն հանդիսացող հողամասի արժեքն ավել է քաղաքացիներին սեփականության իրավունքով պատկանող հողամասերի շուկայական արժեքից: Փոխանակման արդյունում գույքի (հողամասի) գնահատված արժեքի տարբերությունը քաղաքացիները պետք է փոխանցեն Երևան համայնքի բյուջե:

Հողամասերի փոխանակման անհրաժեշտությունը պայմանավորված է հետևյալ հանգամանքով՝ քաղաքացիներին սեփականության իրավունքով պատկանող հողամասերը գտնվում են գոյություն ունեցող եկեղեցու, ինչպես նաև բնակիչների համար բարեկարգված և ընդհանուր օգտագործման գոտի հանդիսացող հատվածին կից, անմիջապես հարևանությամբ և այդ հողամասերը համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի հետ փոխանակության արդյունքում հնարավոր կլինի ընդլայնելու եկեղեցու կառուցապատման, ինչպես նաև դրա զբաղեցրած և սպասարկման համար ծառայող հողամասի մակերեսը՝ ապահովելով նաև բարեկարգման և կանաչապատման համար առավել մեծ հատված և տվյալ տարածքում առկա հողամասերի օգտագործման արդյունավետության բարձրացումը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Հողամասերի փոխանակությանը համաձայնություն տալու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չկա։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Հողամասերի փոխանակությանը համաձայնություն տալու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում չի նախատեսվում եկամուտների և ծախսերի փոփոխություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ